



ՕՐԱԳԻՐ ՉՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՆ 1877

ՉՄԻՌՆԻԱՅ ԴԱՐԱՆ 6 ՕԳՈՍՏՈՍ 1877

ԹԻՒ 1072

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Մեր նախնիքաց Գաղաքական յողուածոյն մէջ յառաջ բերեալ էաք Բէշթայի 1883 լրագրոյն հետեւեալ խօսքը, այսինքն թէ՛ Ռուս. քաղաքի աւելի կը յառաջանան, այնչափ աւելի խիստ և ցաւալի պիտի լինի նոցա յետագարձը՝ Այս գուշակութիւնը՝ ըստ վերջին հեռագրական լրոց՝ լիովին ՚ի գործ դրուելու վերայ է թէ եւրոպայի և թէ Ասիոյ մէջ, ուր օսմանեան զօրքը յաղթանակաւ սահմանադրութեան անցնելով գրաւեցին Ռուսաց երկիրը՝ գրեթէ չորս մըն տաւ թափառեալս։ Անգլիականութեան Լոնտոնի Տէլի Դիկէյրիւն օրագրոյն կը ծանուցանեն թէ Սիւլէյման վաչան՝ զինի նշանաւոր յաղթութեան իրոյ ՚ի Ենի-Չաղարու, սկսաւ զհետ պնդել Ռուսաց, որք մեծ չի յիշուածեալ ետ կը գառնային։ Ըստ ՄՈՐՆԻՆԿ-ԲՈՍԹ օրագրոյն՝ Պէրլինի զինուորական ընկերակցութեանց մէջ կը խորհին թէ՛ զինի նորէնոր պարտութեանց Ռուսաց, անկարելի կը կարծուի որ պատերազմն այս տարի վերջանայ։

Այսու ամենայնիւ կը հաւատեն թէ Ռուսաց կայսրն հակամէտ է հաշտութիւն մի կնքելու Բարձրագոյն Դրան հետ, թէ Աւստրոհունգարիոյ և Գերմանիոյ կառավարութիւնքն նմանապէս յօժարամտութիւն կը ցուցնեն հաշտութեան առաջարկութիւններ ընել պատերազմող տէրութեանց, բայց ոչ յառաջ քան զՀոկտեմբեր ամիսն. քանզի այս ամսոյն մէջ արդէն լընցած պիտի լինի Գաղղիոյ երեսփոխանաց ընդհանուր նոր ընտրութիւնը. զոր Գերմանիան կուզէ հասկնալ և յետոյ Արևելեան գործոց կարգադրութեանը միջամուխ լինել իւր բարեկամական

հզօր ազդեցութեամբ։ Նոյնք է թէ Մեծին-Բրիտանիոյ և Ռուսիոյ քաղաքական յարաբերութիւնքն քիչ մը ձգտեալ են, սակայն անգլիական կառավարութեան հարցումն ինչ լինելով հասարակաց խորհրդարանին մէջ, լրտ Տէրպի յայտնեց թէ՛ պոնտֆոր որ Ռուսիան պիտի չգալի Տարտանէյի նեղուցին, և Պօլսոյ, Սուէզի ջրանցից և Պարսից ծովուն, Անգլիան պիտի չարժենակէ զհեղձութիւն իւր։

Կենցաղագէտ անձանց մեծագոյն մասին համոզմանը համեմատ, մեք ևս կարծեմք թէ Ռուսիան պիտի չուզէ պատճառ տալ Անգլիոյ, որ պէսզի պարտաւորի աւելի զհեղձութիւն իւր։

Բարձրագոյն Դուռն ՚ի նպատակաւ պատերազմական ծանր ծախուց, հարկ համարեցաւ ներքին փոխառութիւն մի ընել ՚ի բոլոր հպատակաց իւրոց անխտր, և այս փոխառութեան համար հեռեւեալ կանոնադրութիւնն հաստատեցաւ. զոր կը հրատարակեմք ըստ Թարգմանութեան ՓՈՒՆՁ օրագրոյն և Պօլսոյ։

Յօդագր. Ա. Անխտր բոլոր հպատակներէն հարկադրեալ (մէծպուրի) փոխառութիւն մը պիտի ըլլայ, միայն պատերազմական ծախուց յատկանալու պայմանաւ։

Բ. Այս փոխառութիւնը հարկադրեալ է, և բոլոր հպատակներէն պիտի առնուի իրենց հարաւորութեան ու կարողութեան չափով։

Գ. Այս փոխառութեան տարեկան տոկոսը՝ 100ին 10, և ի հաշիւ դիւրավճարին՝ 100ին 5 է։

Դ. Այս փոխառութեան բոլոր գումարը՝ 600 միլիոն զուրուշէ պիտի բաղկանայ։

Ե. Ընդհանուր ժողովոյ որոշմամբ և կայսերական հրամանաւ, այս փոխառութեան տոկոսին և դիւրավճարին հատուցման յատկացեալ է հաշ-

ուէկուն մէջ գտնուող և բոլոր գումարն 669, հազար 783 քսակէ բաղկացեալ ընդհանուր տրոց (վերկուի ումումի) 180,000 քսակը։

Զ. Ամեն մէկուն հարստութիւնն ու կարողութիւնը որոշելու և սահմանելու համար սոյնգլիւ մը առձեռն չըլլալուն պատճառաւ, հարստութեան ու կարողութեան չափ համարուած են՝ իւրաքանչիւրին ունեցած կալուածն, առուտուն, շահն (թէմէթու), արքունի գանձէն առած էսհամի, Մուգաթաթի և Զիամէթի փոխարէն (պէտէլաթ) և ամեն ամիս առնուած ամսականներն։

Է. Այս փոխառութիւնը՝ ամեն մէկուն էմլաքի, Ագարի և Թէմէթիութի համար տուած տառեկան տրոց չափ պիտի ըլլայ. իսկ էսհամի, Թի, Թիմարաթի և Զիամէթի 100ին կաններուն երկու ամսականին հա-

ի ըլլայ։ ան հպատակ ամեն մէկ անհատի ու սրճանագրեալ էմլաքի, Ագարի և ի տրոց մէկ չափն (պիւմիլի) և էսհա-

լգաթաթի փոխարէնին 100ին 10ը՝ որչափ որ է, չորս հաւասար բաժնով, չորս ամսոց մէջ ամեն ամիս պիտի առնուի. և ներկայ 1293 տարւոյ Յուլիս, Օգոստոս, Սեպտեմբեր և Հոկտեմբեր ամսոց մէջ պիտի հաւաքուի տրոց հաւաքման պէս հաւաքչաց ձեռօք։

Թ. Ինչպէս ուրիշ անհատներէ, նոյնպէս և ամսական ունեցողներէ՝ էմլաքի և Ագարի կալուածական տրոց մէկ տարեկանը, և էսհամի ու Մուգաթաթի փոխարէնին 100ին 10ը առնուելէն զատ, ամսականներուն ալ երկու պատիլը պիտի առնուի, և Թիմար և Զիամէթի տէրերէն Թիմարի և Զիամէթի փոխարէնին 100ին 10էն գոյացեալ գումարն ալ գործեալ Յու-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹՂԹԱԿՈՒԹԻՒՆ ԱՐԵԱԼՈՒՍՈՅ

Պագի (Չիքցեթի) 19 Յուլիս 1877:

Ազնիւ բարեկամ,

Անտարակոյս ցարդ պահած լուծութիւնս զձեզ զարմանքի ենթարկած է և թերեւս ստէպ՝ սորա պատճառն կը հարցնէք. վասնորոյ հարկ կը համարիմ ներկայիս՝ յառաջ քան զամենայն, յայտ առնել ձեզ թէ՛ ըստորում Մայիս 1 թուականով գրութիւն մ'ուղղած ունիմ առ ձեզ, ուստի պարտաւորեալ էի նորա հրատարակութեան սպասել. սակայն նկատելով թէ մինչև ցարդ ԱՐԵԱԼՈՍՈՅ ՚ի լոյս չբերաւ իմ վերոյիշեալ նամակս, կարեւոր գատնելի այժմ վերստին գրել առ ձեզ՝ խորհելով թէ գուցէ այն ձեռքը հասած չլինի։ (1)

Սոյնքն ըսելով, բարեկամ, չգիտեմ թէ ո՞ր խնդիր ուշադրութեան առնել պարտ է ինձ իմ այս անգամուան թղթակցութեանս նիւթ և առարկայ ընելոյ համար զայն. քանզի նոցա թիւը լէգէնի մը թուոյն կը հաւատարի, այնպէս որ մարդս կը շուարի կը մնայ դոցա առջև։ Բայց և այնպէս պէտք չէ մեզ խրաչիլ նոյն իսկ լէգէնաց առջև ալ. այլ մեր պարտքն է իբր ժողովրդեան մօրդ. գրիչն ձեռք առնուլ և հասարակաց կարծեաց թարգման հանդիսանալ գրական ասպարիզում և ժողովրդական զգացմանց բանիւ և արգեամբ արտայայտութիւն տալ։ Այս մեր պարտքն է անգաղար խօսիլ. ինչ որ բարի է մեր խորհրդածութեանց նիւթ ընել, ինչ որ արդարութիւն է պարտինք մենք մեր բոլոր

ոյժը թափել առ ՚ի պաշտպանել, և ինչ որ ազգային յառաջդիմութիւնը կը խանգարէ, մեր ընկերական, ընտանեկան և անհատական կեանքը կը թիւնաւորէ, առաքինութիւնը արմատաքի կիւլէ և մոլութիւնը մեր մէջ կընդհանրացնէ, պարտիմք վիճաբանութեան, անաշու գիտութեան, անխնայ հարուածոց, և ՚ի մի բան մեր բովանդակ աշխատութեան առարկայ ընել, կուրիլ և մարտնչիլ ցմահ և ցլիւրջին կաթիլներ արեան՝ բոլոր այն վատ սկզբանց հետ, որք կամ իբր որոմն յարդի՝ մեր ժողովրդեան մէջ յառաջ եկած են, և կամ արտաքուստ յատարաց մեր մէջ մուտ գտած են։ Թէև այս մասին մեր պատուարժան Ս. Հարք ամենէն առաւել և մասնաւորապէս կատարելոյ նուիրական պարտաւորութիւն ունին, բայց քանի որ նոքա՝ ընդհանուր առմամբ, գրեթէ լուռ կը լինան և փոյթ չեն տանիր յեկեղեցւոյ ժողովրդեան ուշադրութիւնը զանազան ազգային կենսական խնդրոց վրայ դարձնելոյ, չեն աշխատիր մէնմի անհատ անձի պարտաւորութիւնը ազգային խնդրոց ընդհուպ լուծուելոյ մասին՝ իրեն յիշեցնել և հրաւեր չեն կարգար հասարակութեան բանիւ և արգեամբ ձեռնառու և օժանդակ լինելոյ ազգային իշխանութեան վասն յառաջդիմութեան ժողովրդեան, վասն բարձման զեղծմանց և կերպ կերպ հարստահարութեանց, որոց խեղճ Հայը աշխարհիս ամեն կողմն ենթակայ լինելոյ դժբաղդութիւնն ունի, քանի որ, կըսեմ, եկեղեցական մարմինը առ այս անփոյթ կը լինայ, ուրեմն հարկ է մեզ որ հեռուէն և մօտէն ձայն բարձրացնենք և ցոյց տանք աշխարհի, որ Հայն դեռ կապրի, թէ նա ալ իբր մարդ՝ զգացում և սիրտ ունի. այս սիրտ մը, որ թերեւ շատերու կուրծքում սկսած է անզգա-

յանալ. բայց բազմաց մօտ ալ նա նոր կեանք է առնում, սթափում է ՚ի խոր քնոյ, սկսում է ճաննալ իւր պարտքն և իրաւունքը և զանազանեւ բարին՝ ՚ի չարէ, արդարութիւնն՝ յանրաւորեմնէ, առաքինութիւնն՝ ՚ի մոլութեանէ և գեղեցիկն ՚ի ագեղէն։

Քանի մը ամիս առաջ գայթակղութեան նոր քոր մ'ալ գլորեալ մի քանի նորասէր պարոններէ՝ քայլ առ քայլ յառաջ եկաւ մեր ժողովրդական կենաց ասպարիզում. գրաբառի դաստառութիւնն յազգային վարժարանաց բարձման խնդիրն էր այն, որ այնչափ աղմուկ հանեց և հրապարակը խառնաշփոթ ձայներով լեցուց, այնպէս որ՝ Սենսարեան աշտարակաչներուն նման, սկսանք զիրեար չհասկնալ և միմեանց խորհուրդներն ու գաղափարներն ըմբռնել մեզ համար դժուարին եղև և Պատճառն. — որովհետև օրուան գիւցազունք՝ փոխանակ լուրջ և խոհուն կերպիւ իրենց մտածութիւններն առ այս փափուկ խնդիր՝ մեզ արտայայտելոյ, արհամարհոտ տողերով, թիւնալից նետերու նման խայթող գրչով, որոտալի ձայնով, ՚ի մի բան յանձնապատան և խրոխտ կերպարանօք գրական ասպարիզում խռնեցան։ Մին կողմէր իւր գաղափարն իբր պատգամ Տէրիւսան ամպերէն ՚ի վար որոտալ, միւսն գուն կը գործէր գրաբառի վարկն ու արժէքն ժողովրդեան մէջ իսպառ կոտորել և բնաջինջ ընել. իսկ միւս մը՝ իր նորը պերճախօսութիւնը հասարակութեան ցոյց տալով, գաղինեայ պատկեր ժառանգել կը յուսար։ Բայց այժմ, որ սոյն խնդիրն եթէ ոչ օրինաւոր կերպիւ, իւր լուծումն ստանալով, դէթ ազգային գրաբարտաց ոմանց արդարացի և անաշու վճիռն ընդունած մի քանի քայլ հեռացած է գրական ասպարիզէն և ձեռքերն

(1) Եւ իբր յիշեալ նամակն, ոչ եմա ՚ի ձեռն մեր։
Ման. խմբագրին։

իս, Օգոստոս, Սեպտեմբեր և Հոկտեմբեր ամսոց մէջ գանձապահներու (մալ մէմուրը) ձեռք պիտի հաւաքուի :

ԺԱ. Այս հարկադրեալ փոխառութիւնը, եթէ մասնաւորաց ոմանք ուզեն՝ դրամի տեղ զինուորական պիտոյք եղող արմոխք տալով փոխարինել, տրուելիք արմոխքն տեղական ժողովոց փնջոցաւ որոշեալ գնով ընդունուի :

ԺԲ. Այս փոխառութիւնը, թղթադրամ չըրջարեող տեղերը զէշէ՝ ու ձեռքէ՝ ըլլալով պիտի հաւաքուի . և ինչ տեսակ դրամոր առնուի՝ վճարման ժամանակ նոյնը պիտի վճարուի, և հետեւաբար առնուելիք դրամին տեսակը՝ տըրուելիք ընկալագրոց մէջ պիտի նշանակուի :

ԺԳ. Այս փոխառութեան արդիւնքը ուրոյն պահուելով՝ ամեն ամսոյ վերջը ելումտից պաշտօնատունը պիտի դրկուի, միայն պատերազմական ժամուոց յատկանալու պայմանաւ : Ելումտից պաշտօնատունն ալ, տրուած հրամանին համաձայն կայսերական բանակներն ալ պիտի դրկէ, և ընկալագրեր ընդունելով պիտի պահէ :

ԺԴ. Այս փոխառութեան համար տրուելիք առժամանակեայ ընկալագրոց մէջ նշանակուած պիտի ըլլան՝ թիւ, տուողին անունը, դրամին կամ դրամի տեղ տրուած բանին տեսակը, և չորս բաժիններուն քանին երոգէն ըլլալը : Ընկալագրի՝ տպեալ, գույնէն կտրուած, և գանձապահներուն (մալ մէմուրը) կողմանէ կնքեալ պիտի ըլլան :

ԺԵ. Այս փոխառութիւնը 100ին 10 տոկոսով 32 տարուան մէջ ամբողջապէս պիտի վճարուի, և տուրք վճարող մասնաւորաց տրոց հաշուոյն ալ պիտի ընդունուի իբրեւ չըջարեող դրամ, քաժիններուն վճարման ժամանակ :

ԺԶ. Փոխառութիւնը իւրաքանչիւր անհատէ աւելցող ընդունուելուն պէս, այսինքն 1293ի Նոյեմբեր սկիզբը ամեն մէկուն ձեռքը գտնուած

առժամանակեայ ընկալագրոց տեղ՝ իւրաքանչիւր փոխառուի բուն մուրհակ (սէնէտ) պիտի տրուի, որ անանուն և թուաւոր պիտի ըլլայ և ամեն տարուայ վերջը տրուելիք տոկոսին ու գլխավճարին դրամները պարունակող 12 կտրօն (գուրօն) պիտի ունենայ :

ԺԷ. Փոխառութիւնը 12 տարուան վերջը ամբողջապէս և տոկոսիւքն վճարուելու համար, և ամեն մէկ բուն մուրհակին վրայ գտնուած կըտրոններուն իւրաքանչիւրը՝ տոկոսին ու գլխավճարին դրամներով մէկ տեղ հաւասար քանակութիւն մը պիտի պարունակեն :

ԺԸ. Այս փոխառութեան տոկոսն ու գլխավճարն՝ ամեն տարի Նոյեմբերի սկիզբը՝ կտրոնները ներկայացուած ատեն՝ ելումտից պաշտօնատունէն, և ամեն տեղ գանձատուններէն (մալ-սանտրոլը) ըստ տեսակին ամբողջ պիտի վճարուին, և ամեն տեսակ քէմէթ թուի և էմլաքի տրոց համար պիտի ընդունուին :

ԺԹ. Այս փոխառութեան տրուելիք կտրօնաւոր մուրհակները՝ չորս տեսակ պիտի ըլլան, 50, 100, 500 և 1000-ոց : Ամեն տարի տրուելիք տոկոսին ու գլխավճարին հաշուոյն և վերջին կտրօնէն զատ, մէկմէկու հաւասար գտնուելու համար, 12 կտրօն պիտի պարունակեն :

Ի. Այս փոխառութիւնը մէկ տարուան համար և առժամանակեայ ըլլալուն պատճառաւ, ամեն տեսակ կառուածոց արժէքին վրայ տեղի ունեցած և ունենալիք գատեբը ուրիշ խնդիր ըլլալով՝ այս մասին լսելի չպիտի ըլլայ :

Դրանք մէկն եթէ առնուլ ուզէ այս մուրհակներէն՝ գլուխ գլխի պիտի տրուի :

ԵԱՆՈՒՆԻՆԻ

Այս կանոնադրութեան մէջ թէ և իբաց առեալ են՝ զօրականն ու ոստիկանք և մինչև Գոլ աղասիի աստիճան ունեցող սպայք, և նշանակեալ են Ալայ-էմինի, հազարապետ, և աստիճանաւ անոնցմէ վեր եղող սպայք ու հրամանատարք, բայց որովհետեւ ասոնք այժմ ըստ մեծի մասին թշնամոյն դէմ պատերազմաւ զբաղեալ են, ուստի անոնցմէ փոխառութիւն ընելը յետաձգել որոշեց Բ. Դուռը, և կայսերական հրամանաւ հաստատուեցաւ :

ԵԲ

գիտութեանդ և հաճութեանդ, եթէ դու քու պարտքդ և իրաւունդ ճանչնաս և արիաբար պաշտպան կանգնիս քո ժամանակաւոր և մասնաւորապէս քո յաւիտեական շահերուդ : Ո՛չ անկարելի է կըլիչէ ձայն մը Թ. Ղազարի ափերէն . դարձեալ կըլսենք, անկարելի է որ դրաբառը մեռնի, ոչ միայն աշխարհագրաբար մայր և դայեակ լինելուն համար՝ յորմէ նախ պէտք է մանի ոչ սոսկ գլազէտն, այլև ամեն ճիւղի ուսման պաշապող ազգայինն, անոր արմատներովը, կանոնաւոր անանցներովը ու բարդութիւններով, զանազան ուսմանց գաղափարները բացատրելոյ՝ համար՝ ուր և որչափ որ կընքէ լեզունիս, և ինչպէս որ բնական խելքը կառաւնորդէ, որպէսզի յախուուն երոգական բառերով լիճողինք մեր գրութիւնները, մինչդեռ մեր լեզուն մէջ անոնց մէկ բաւական մասին համապատասխանող բառերն անպակաս են, այլև զինքը կենդանացող մեզի ժամանակակից այնպիսի գրիչներու պատճառաւ՝ որք մեծապէս սիրողցին զինքն և իւր փառքը պայծառացուցին, յայտնելով մեզ անոր անբաւ գեղեցկութիւնքը և կարծես թէ իրենց գոչաց տակ քանի մ'ուրիշ չքնաղ գոյներով առաւել ևս գեղեցկացուցին, և միով բանիւ կրկին ևս հաստատուեցին նորա՝ (այն է դրաբառին) մեր մեծ գանձն ու պարծանքն ըլլալը, վեհ հանճարներու և անոնց գերադոյն զգայմանցն ու մտածութիւններու հետ զմեզ կանգողը, ազգութեան միակ գործն ու նուիրական աւանդը և անձկատոյր որոնց սիրտնաքնն ու շարժիչն մեր՝ առ երբեմն փառաւոր և երբեմն աղէկէզ անցեալն, և առ նախնիս թուուցանելով զմեզ և անոնց հետ կերպիւ իւրեք կենսակից ընելով : (Տես ԲԱՁԱՅԱՆԻ ՀԱՆՔԻՍԱՐԱՆՈՒ ՀԱՄ. 35, պրակ 1, 1877) :

ԱԶԳԱՅԻՆ

Դիտողութիւնք ի պաշտպանութիւն գրաբաւ լեզուն մերոյ, քաղեալ ի ՓԱՐԻԶ անուն լրագրէն, 3 Յունվար 1862 :

(Շարունակութիւն եւ վերջ : Տես ԲԻ 1070.)

Թուի մեզ պատշաճ հաստատել զգրաւոր գաղափարները զայդ ի վեներտիկ (ներքեցի արտադրութեան մտածութեանս յայտն րոպէի աւել, զի ի եմ յաւսով զի ընդ մօտալուստ փոփոխել տերանց վեներտիկ, եղիցի և փոփոխութիւն ընդ Միաբանութիւն սիրելի եղբար, մերոց անդր՝ բարեբաստիկ վան հայրենեաց, յորոց նոքա խորթացեալն թերեւ ըստ հանգամանաց և (յակամայս) ի վեներտիկ լեզ. վերանստ չուծեամբ Միխիթարեան Ուխտին, զլուխ կարգելով նորին զմեծահամբաւ քերթող և քերական հայրն, արժանամեծար Արսէն Բագրատունի և զչքնաղ երջանիկ հայկաբան մեր Հայր Եղուարդ Հիւրմիզեան, և զայլս օգնականս նոցա յարմարաւորս հմտութեամբ իւրեանց ի պաշտաման յայնմիկ :

Որ անմիջական ունի զարդիւս զպէտս և ըզկարեւորութիւն հաստատման, և որոյ ի գիւտ անձնիւր գրիչ ապաստան լինի այժմ իւրային ճարտարութեան, են բառք մակայականք կամ արհեստականք, ատենականք, պատերազմականք, քաղաքագիտականք, տիտղոսականք՝ յասացից նաեւ Ձեռնարկանք կամ Տրամաբանականք, Բարոյականք իսկ և Իմաստասիրականք, որոց, և յորովից ունիմք դեռ զկարօտութիւն զբառից սահմանեալ նշանակութեամբ՝ հասարակաց միապէս ըմբռնելի(1) : Ստոյգ ասացից շատ անգամ իմանամ զմիտս արդի Հայ գրաց նպատիւ և եթէ եւրոպականին իմոյ, զոր հաւաստի եմ ընկեր իմ թէպէտեւ քաջ Հայկաբան անգէտ եւրոպական լեզուի դժուարանայ (այո՛ չկարողանայ բնաւին մտահաս լինել : Ուստի միակ հնար օգնելոյ այնմիկ այն իսկ է հաստատման զոր ապապարեմ ի վեր անդր) ընտրել, սահման

(1) Կարօտին ի մեզ բազմաւ եւ անոռանք ծագիկանց, բռնոց եւ սնկոց, ձկանց, քոբոնց եւայլն, զորս մարք է մեզ յօրինել կամ ըստ ստուգութեանքեան նոցա հայեցի բառի կամ հայեցուցանելով զօտարինն ըստ կարի դաշնակաւոր իմն փոփոխութեամբ :

բաւական հանդարտած են, արժան է աստ մի քանի խօսք փոխանակել :

Գրաբառն Հայուն նուիրական լեզուն է . զի ասի ոչ միայն իւր նախահայրերէն իրեն յանձնուած թանկագին աւանդ մ'է, այլ նաեւ իւր եկեղեցւոյն հիմնական տարրը և իւր առաքելական սուրբ կրօնին գործարանը (organe) . բոլոր եկեղեցական արարողութիւնք, սաղմոսերգութիւնք շարականք ևայլն, գրաբառ լեզուաւ կըլիտարուին : Աստուածաշունչ մատենանք, մեկնութիւնք, աղօթագիրներն ևայլն, ամենն ալ գեռ միշտ ի գրաբառ լեզու ի լոյս կուգան . ապա ուրեմն ժողովրդեան կրօնական կենաց համար՝ գրաբառի ուսումն յազգային վարժարանս ամենակարեւոր պիտոյից մին է . զի վերջուր անգամ մը գրաբառն մեր ուսումնարաններէն, և ահա մէկ հարուածով հայկական եկեղեցւոյ հիմն տապալեցիր : Որովհետեւ նա՝ որ իւր կրօնական լեզուն չհասկնար, հարկաւ ինքնին կըգաղարի սուրբ եկեղեցի յաճախելէ, և այսպէս հետզհետէ օտարոնալով ի մայրենի եկեղեցւոյ՝ կամ բոլորովին անտարբեր կըլլայ կրօնի մասին և կամ յափշտակիչ գազանաց որս կըլլաւանայ :

Քրիստոնէական սուրբ կրօնքն՝ իւր աստուածային անսուտ խոստմունքներովն Հայուն միակ միխիթարութիւնն եղած է ամեն առթիւ : Նա նեցուկ մ'է, որոյ վրայ տարաբաղդ Հայը բոլոր ուժովը յենած այս արտասուաց ձորէն կանցնի : Կուղենք զրկել զինք իւր սյդ . միակ և քաղցր միխիթարութիւնէ, վերջնեալ գրաբառի ուսումը յազգային վարժարանաց : Այլ սակայն հանգարեմք դու, ո՛վ Հայ ժողովուրդ, զի ոչ ոք կարող է քու ուսումնարաններէդ բան մը պակսեցնել կամ ո՛ր է բան յաւելուլ առանց քու

Ժամանակը զարմանալի արագութեամբ հոլովուելով հսկայ փոփոխութիւններ յառաջ բերելոյ վրայ է ամեն օր երկրիս ամենայն կողմերն յամենայն ազգս և ժողովուրդս : Ո՛վ որ մտախոհ նայուածքով մը անցեալն ներկային, երէկն այսօրին հետ բաղդատելոյ փոյթ տարած է, նա անտարակոյս նշմարած է մեր ժողովրդեան և գլխաւորաբար ազգային կրօնական, ընտանեկան և ուսումնական կենաց շրջանում հետզհետէ յառաջ եկած այն փոփոխութիւնքն, որոնցմով այսօր բազումը կըմխիթարուին և համայն ազգին համար՝ բարի ապագայ մի կըզուշակեն : Սոյն փոփոխութիւնք տեսակ տեսակ լինելով, իրենց՝ մեզ համար յառաջ բերած կամ լուս ևս է ասել յառաջ բերելիք ազգեցութիւններն, հետեւութիւններն և արդիւնքն ըստ այնմ տարբեր են : Արդարեւ մեզ ամենուս համար շատ օգտակար կըլինէր ասոնցմէ իւրաքանչիւրոյն վրայ առանձին առանձին և մասնաւոր կերպիւ խօսիլ, գրել և ճառել . բայց ասի ի հարկէ միայն մէկ անհատի մը գործ չէ, այլ ընդհանուր գործ մի, որոյ մասնակցելոյ ամեն մարդ՝ որ քիչ շատ օրինաւոր խորհել և հրապարակաւ խօսել գիտէ, հրաւեր և կոչումն ունի : Իս իմ մասին ճանաչելով մի այսպիսի խնդրոյ վրայ ընդհանուր խիստ պիւ խօսելոյ կարեւորութիւնը, համարձակութիւն կառնում ներկայիս իմովսանն առ այս՝ պատուական ԱՅԼԱՌԻՍՈՅ միջոցաւ, իմ սիրելի ազգայնոց խօսիլ մասնաւորապէս մի խիստ կարեւոր նիւթի նկատմամբ, որ մեր ամենուս ուշադրութիւնը պրաւելոյ արժանի է : Ընթերցողք անտարակոյս ինձ նման, ազգային լրագրաց մէջ կարգացած են և ամեն օր կըկարդան այժմ մեզ սովորական եղող այն ոճերն և արտասանութիւններն, որք ուր գրաբանութեան

նեւ և հաստատել զնշանակութիւնս արդիւնի
բառից որով է բացայայտել զմտացի և զգօն
խմաստս Եւրոպական գրութից և գրոց , զորոց
գնահատուիս , չէ պարտ մեզ ժխտել , եթէ չու-
նիմք ամենեւին կամ սակաւուք և եթ ունիմք
սա հին կամ առ նոր հեղինակութիւնս մատե-
նից մերոց :

Այսու եղանակաւ ընտելացեալ բառից մտաց
ուշիմ ազգայնոց՝ առհասարակ՝ եթէ եւրոպա-
գէտք իցեն և եթէ միայն Հայագէտք՝ փութով
ուսցին նոքա ի միտ առնուլ զինի հանդիպելոյ
միևնոյն բառից ի զանազան հեղինակաց վար-
եալ , և միանգամ խելամոտեալ իմաստից նոցին՝
այսինքն յար ի յուշի : Բայց անհնար է նոցա
առնել , եթէ իւրաքանչիւր գրիչ կամ թարգ-
մանիչ ազգային այլապէս վարեցէ զբառս իւր
ացատրել զիմաստս՝ գիտովին Եւրոպականս :
Որ խաբ խնդրէաք և զայս ինչ յայնցանէ որ
լայն ուսման իւրեանց ազգասիրեն տարածել
առ հասմագայինս , մի ամենեցուն ըստ հա-
նոյս և ըստ յատման միայնոյ մտաց իւրեանց
հեռներէց ինեւ ի փոխումն բառից և սահման-
եալ նշանակութեանց նոցին :

Ա. Պ. ԱՂԱՆՈՒՐ

Ե. Պոլսոյ ՀԱՅԲԵՆԻՔ լրագրոյն անցեալ ամսոյ
թիւոյն մէջ զժողովոյ կարեւոր տեղեկու-
թիւնսն ընթերցուածք :

Երէկ ազգային ժողով գումարեցաւ ի Մայր
կիցնոյն ընդ նախագահութիւն Ս. Պատրիարք
որ և առնեալեալեալ եւամբ փոք. Գրեթան էֆ.
Ս. Պատրիարք Հայրը հետեւեալ չորս տրա-
կտիւթիւնները ներկայացուց ժողովին :

1. Նորընտիր փառա. ժողովոյ անդամք խմբո-
նի հրաժարած ըլլալով , նորոգ ընտրութիւն
ուրեք :

2. Փարիզի Մուրատեան վարժարանի չորս օ-
ր ծախուիլը իմացընող հեռագիր մը ընդու-
ած ըլլալով թաթարեան գերա. տէր Գրեթի
պարագայեալէն որ այժմ ի փարիզ կը գտնուի ,
որին Սրբազնութիւնը ձգգին սեփական իրաւ-
ունքը չկորուսեալ համար Բ. Դրան թագրի
որէ է որ հեռագրաւ փարիզի օսմանեան դե-
սանին հրաման ընէ սոյն առուծախն արգիլելու
համար , և թառն մասնաժողով մը գրուի , որ-
իցի Հայոց ազգը իր սեփական իրաւանց տէր

առուկ եղած են , այսինքն՝ մեր դարը ազգաց
առաջագիտութեան ժամանակն է , նոր Ոսկե-
ար է՝ և այլն և այլն , որոնցմով մեր գրագէտք
թողութեան ասել կամին թէ այժմ մի խիստ
արեւել ժամանակի մէջ կապրին մարդիկ , ուս-
տի իրենց կացութիւնը ըստ այնմ պարտին տն-
նել և ժամանակին պահանջմանց համեմատ
պիլի : Արդարեւ ասի ամենայնիւ ճիշտ է և ոչ
կրնայ ուրանալ սորա սոյսպէս լինելն . սա-
այն կէտ մի կայ որ ոչ մէկուն ուշագրութեան
թիւի պարտի . այն է թէ արդեօք նոր ժամա-
նակի մէջ ապրող մարդիկ պարտաւոր են նո-
պահանջմունքն ամենայնիւ իբր արդարացի
պիլի և օգտակար դատել և հետեւի նոցա ,
որոնցմով ինչպէս ախարհի միւս կողմերն .
որպէս ալ մեր երկրին և մեր ազգին մէջ գրա-
նութիւնը օրրատօրէ ծաղկելոյ , զարգանալոյ
ուստածելոյ վրայ է . ասի անտարակոյն նոր
ամանակին ազգեցութեան հետեւութիւնն ու-
նուն է , որոյ վրայ ի հարկէ ամեն մարդ ի
կը բերելի . բայց ո՞վ կարող է ասել և ա-
պրուցանել թէ հայկական գրականութիւնը
արդիւն ապրուցանակութեամբ մի այն-
ի տրամագրութեան տակ ըլլայ՝ որ ժող-
ովեան պիտոյից ստուգիւ և արդեամբ համա-
տարախանել կարենայ : Ուրեմն եթէ ժող-
ովի իւր փնտռած սեռնդը՝ որոյ նա այսօր
կարծաւ , Հայ մամուլ արտադրած բերքում
գտնելով և վայելել չկրնալով՝ փոխանակ օրրատ
գրականութիւնը սիրելոյ՝ անկէ պաղի , ո՞վ
նայ առ այս նմա յանդիմանութիւն մ'ուզել
արկելով թէ Հայ ժողովուրդը դարուս լու-
սաւորեալ ազգաց գացած շաղկէ մարտիկով
թիւրեցանութիւնը չարգել և այլն և այլն : Թող
արտադրեն ազգային հեղինակներն և ապա-

ըլլալու համար արդար և անաչառ քննութիւն
ու դատաստան ըլլայ :

3. Ժողովին իմացուց թէ վեհա. Սուլթանը
Հայոց կամաւոր գրութիւնը գահութեամբ լսելով ,
Բ. Դրան միջոցաւ երկու գումարտակ քաղաքա-
պոհ զօրք խնդրած է ազգէն , ինչպէս նաև ու-
րիշ ազգերէն , որուն համար յատուկ կանոնա-
գրութիւն մ'ալ պիտի հրատարակուի եղեր :

4. Պատերազմական նպատակն համար թէ և
Հայոց ազգը բաւական աշխատել և իր գրամա-
կան օգնութիւնը չէ խնայել , բայց ինքը (Ս.
Պատրիարքը) այսու չբաւականանալով , ժող-
ովականաց ուշագրութիւնը հրաւիրեց և խնդրեց
որ ամեն ոք իր կարողութեանը համեմատ օգ-
նել փութայ :

Ի վերջոյ Ս. Պատրիարքը յայտարարեց որ
վերջին երկու առաջարկութիւնները առայժմ
վիճարանութեան կարօտ չըլլալով , փառ. ժող-
ովի և Մուրատեան վարժարանի խնդրոց վրայ
պէտք է դարձնէ ժողովն իր ուշագրութիւնը :

Նախ Մուրատեան վարժարանին խնդրը վի-
ճարանութեան գրութեամբ , երեսփոխաններէն
ոմանք խօսք առին և մասնաւորապէս գերա.
թորէն սրբազան Նար-Պէյ , լուսահոգի կտակա-
րար Սամուէլ Մուրատայ նպատակը և սոյն կտա-
կին ճշդիւ գործադրութեան համար հանգուց-
եալ թեոգորեան Սարգիս վարդապետի ունե-
ցած աշխատութիւնը բացատրեց և սոյն կտա-
կին վրայ նոր տեղեկութիւններ տուաւ , որմէ
գոհ եղան ժողովականք : Ուր ուրեմն ժողովը
Ս. Պատրիարք Հօր յանձնարարեց որ սոյն խնդ-
րոյն համար իր ազգու միջամտութիւնը չարու-
նակէ և ազգին օգտակար կերպով գործէ , ինչ-
պէս սկսեք է գործել :

— Պատրիարքական գերա. փոխանորդ Հայրը
երէկ իրիկուն արտաքին գործոց նախարար
Վան. Սէրվիլը փառային առարանքը դնաց Մու-
րատեան վարժարանի խնդրոյն համար ծանուց-
ուած հեռագիրը զարնել տալու համար ի փարիզ :

Իզմիր , 30 Յուլիս 1877

Յարգոյ խմբագիր ԱՐՇԱՆՈՅՈՅ ,

Ժամանակէ մը ի վեր Ա. ՄԱՍԼՈՅ և ԱՐՇԱ-
ՆՈՅՈՅԻ մէջ վիճարանութեան եւթարկուած
գրաբառի և աշխարհաբարի խնդրը՝ ներուի

գրապետք , չմոռնանք նաև լրագրագետներն ,
թող տան նոքա ժողովուրդեան ինչ որ սա իւր
բարոյական , կրօնական , ուսումնական և քա-
ղաքական կենաց բարեխառնութեանը և յառա-
ջագիտութեանը համար կրկնաթանկ , և ահա ժո-
ղովուրդն երկու ձեռքով գրականութեան պի-
տի փարի և պիտի ողջունէ ազգային մատենա-
գիրներն և հեղինակներն իբր իւր լուսաւոր
աստղերն մութ ամպերում : Այս վերջին քան
տարիներուն մէջ մեր ժողովուրդը վէպէ և սի-
րահարական պատմութիւններէ զատ՝ գրելի
ուրիշ բան չկրնալ կարգաւոր , առհասարակ թէ
ազգային լրագրաց և թէ հրատարակեալ գրեանց
մէջ , անտարակոյն շատ զարմանալոյ բան չէ
եթէ բազումը նոր հրատարակութեանց երեւն
անգամ չեն ուզեր նայիլ . զի այս տեսակ գըր-
եանք միայն զօսանտոյ և ժամանակ անցնելոյ
ծառայելով՝ ժողովուրդեան իսկական պիտոյն
չեն կարող լինել : Չեմ ուզեր ասել թէ վիպա-
սանական հրատարակութիւնք բնական օգուտ
մի չունին ժողովուրդեան դաստիարակութեան և
գրականութեան յառաջագիտութեան , քա-
ղիցի՝ զի ո՞վ կրնայ ուրանալ Պոլսոյ վերջինայի ,
Թշուառքի , Գաղտիք հաւատաքնութեանի
և սոցա նման կրթիչ և ժողովուրդեան միտքը
մշակող գրեանց արդիւնաւորութիւնը և օգ-
տակարութիւնը . այլ միայն սա է իմ բնիքս
թէ սոքա երկրորդական բաներ են , և մեր
ժողովուրդը վէպեր կարգաւոր առուել շատ
կարեւոր պիտոյն ունի , զորս Հայ մամուլն պարտ
էր ցարդ լիւրի հոգալ և լեցնել զայս : Կը հար-
ցնեմ պատուական ընթերցողին , ուր են երկ-
րագործական հրատարակութիւնք մեր գրական
ապարիքում , ուր մնացին ցարդ արուեստական
գրեանք , ուր բարոյական պիտութեան և կրօ-

մեղ բառի թէ՛ իրեն յատկացեալ սահմանին մէջ
չմնաց , որ է գրաբառին դաստիարակութեան
բարձունք Մերոպեան և Հոփսիմեան տղա-
յին երկսեռ վարժարաններէ քաղաքիս՝ իբրեւ
մեռեալ և անպիտան , և անոր տեղ՝ աշխարհա-
բառի դաստիարակութեան յաջորդելն :

Ա. ՄԱՍԼՈՅ խմբագիրը՝ իսրեւ բանիմաց և
ներհուն՝ կը յուսայինք թէ ԱՐՇԱՆՈՅՈՅ բանա-
ւոր առարկութեանց կը համադրուի առանց քմա-
ծին և ծուռ մեկնութեանց նիւթ ընելու գրա-
բառի խնդիրը : Մեզի համար եթէ ցաւալի բան
մը կայ , այն ալ Ա. ՄԱՍԼՈՅ խմբագրին՝ առա-
ջին անգամ անձնականութեանց վրայ անհաճոյ
ակնարկութիւններ ընելով՝ նախադրեալ ըլլալն
է . որմէ քաջալերեալ կամ խրատեալ յօդուա-
ծագիրք ոմանք՝ այսօր թէպէտեւ իրենց նշանա-
բան՝ գրաբառի և աշխարհաբառի խնդիրը կը-
ցուցնեն , այլ դժբաղդաբար իրենց գրութեանց
ամբողջ պարունակութիւնը զիրար թնամանե-
լու և կամ իրարու անձնականին դէմ անվայե-
լու խօսքեր կուտելու վրայ կայացած է :

Այս կերպ վիճարանութիւնը ոչ օգտակար է
և ոչ գովելի . նա մանաւանդ մեզի այն՝ շատե-
րու այն տեսլի համազումը կուտայ թէ յօդուա-
ծագիրք ոմանք՝ փոխանակ այս տեսակ կարեւոր
խնդրոյ մը պահանջած զգուշութեամբ և լրջու-
թեամբ խօսելու , ընդհակառակն սոյն խնդիրը
իրենց իբրեւ միջոց և գործիք ընելով , հակա-
ռակադրութեան և ինքնահաւանութեան խիստ
վնասակար օրինակներ կընծայեն ժողովուրդեան :

Աւելի փափաքելի է մեզ համար տեսնել , որ
ասկէ վերջը Պ. յօդուածագիրք ամենայն չա-
փազանցութիւններէ՝ կարելի եղածին՝ չափ ,
զգուշանալով միմիայն իրենց նպատակ կընտրեն
գրաբառին դաստիարակութեան կարեւորութեան
կամ անկարեւորութեան վրայ կարծիք յայտնել ,
եթէ ունին , և անոր վրայօք պատշաճօրէն խօ-
սիլ , եթէ ուզեն որ վիճարանութիւնը օրինա-
նաւոր , ուղիւ և պատուաւոր դիւր մը առնուի :

Կը խնդրեմ , յարգոյ խմբագիր , որ սոյն գուշ-
նաքեայ գրութեան տեղի մը շնորհէք ձեր
պատուական լրագրոյն մէջ : Մնամ , և այլն :

Ե. ԱՂԱՆՈՒՐ

Չմուռնոյ վիճակին ազգային երեսփոխանա-
կան ժողովն իւր նստին մէջ որ ի 26 ամսոյն

նախան կարեւոր ու կենսական խնդրոց վրայ ճա-
ռող գրեանք : Այս տեսակ դաստիարակութեց
կրկնաթանկ մեր ժողովուրդը , զի սոքա մեր ներ-
քին և արտաքին կեանքը կը բարեխառնեն , կը-
դաստիարակեն և բարի քաղաքացի ու ճշմա-
րիտ քրիստոնեայ կընեն զմեզ . մինչդեռ վէպե-
րէն օտարին պալատներ չինելէ զատ ուրիշ բան
չենք սովորիլ : Թող այս դիտողութիւնս ծանր
չթուի պատուական ընթերցողին , զի ասի իրո-
ղութիւն է , և եթէ մեր ուշագրութիւնը առ-
այն դարձնելոյ դեռ վարանինք , ապազային
մեր կորուստը շատ դառն և անդարմանելի պի-
տի լինի : Միակողմեան աշխատութիւնը ամեն
արթիւն և ամեն նկատմամբ վնասակար է :
Փորձէ ասի մարմնոյդ վրայ , բոլոր ժամանակ մը
ձախ ձեռքդ կամ ալ ոտքդ անդործ և անշարժ
պահէ և միշտ միւսով աշխատէ , պիտի տեսնես
որ առաջինը հետզհետէ թմրելով՝ իբր գործող
անդամ մարմնոյդ աշխատելոյ անընդունակ և
անյարմար կըլինի վերջապէս . ահա ճիշտ այս-
պէս է նաև ամեն պարագայի նկատմամբ : Ամ-
բողջ մարդը բովանդակ զօրութեամբ մարմնա-
կան և հոգեկան , մարդոյս բոլոր՝ ձիւրքերն և
տաղանդներն պարտին յարաժամ կրթութեան
և դաստիարակութեան առարկայ լինել : Այս-
պէս կընէ Եւրոպային , այսպէս նաև Ամերիկա-
ցին , որոց բունած շաղկէ մենք ալ հետեւելու
եմք եթէ կը բազմամբ իրենց յառաջագիտու-
թիւնը ունենալ , որով այսօր նոքա կը պարծնեն
և զմեզ զարմանաց կենթադրեն : Եթե թէ այս
տողերն ուրիշ շատերու գրգիռ . մ'ըլլային դը-
րեն ձեռք առնելոյ , և այդ տեսակ կարեւոր և
կենսական խնդրոյ վրայ յօդուած Հայուն , գրե-
լոյ թէ ազգային լրագիրներում և թէ մամու-
ւոր տետրակներում :

ՄԻՀՐԱՆ

անցելով, հարկ համարեցաւ փաղաքական հին ժողովոյն տեղ նոր ժողով մի հաստատել. որոյ անդամքն հետեւեալքն են, որք ըստ սահմանադրական կանոնաց՝ դադարի քուէարկութեամբ ընտրեցան. Մեծարդոյ տեարք,

- Պօղոս Գրի. Կաստանդեան
- Խաչատուր Զաքիեան
- Կարապետ Սէրճոյեան
- Պօղոս Տիւլէրեան
- Պետրոս Պարտիզդանեան
- Մկրտիչ Եսայեան
- Պաղտասար Սուքիասեան :

Ժողովուրդն մեծ ակնկալութիւններ ունի այս նորընտիր ժողովոյն ազդասիրական ջանքի վերայ վասն ազգային գործոց բարեկարգութեան և մանաւանդ երկուսից հաւասարակշռութեան վերահաստատուելոյն : Սիրելի է մեզ յուսալ թէ ժողովրդեան ակնկալութիւնքն 'ի դերեւ պիտի չեղեն :

Հետեւեալն յուղարկեցաւ մեզ յազգային Պատրիարքարանէ Պօլսոյ՝ 'ի հրատարակութիւն. **ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԱ. ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ**

Ասկէց քսան տարի յառաջ բնիկ Եօզրատ քաղաքի թուղ—Գայա փողոցի բնակիչ Այվազեան սէիս Գաբրիէլ անուն անձը՝ մայրաքաղաքիս մէջ իսկականաբար Եփեսոս—մահալէ թաղը Նազը անուն օրիորդի մը հետ կամուսնանայ ըստ օրինի : Երեք տարի իւր կնոջը հետ կենակցելէն յետոյ՝ անէն կըմեկնի, և այսօր ճիշտ 17 տարի է եղեր, որ յիշեալ սէիս Գաբրիէլի ուր գացած ըլլալը անյայտ մնացեր է :

Ազգային Պատրիարքարանը եօթը տարի յառաջ պաշտօնական ծանուցմամբ նոյն Գաբրիէլի հետքը որոնել է՝ գիտելով հրապակաւ առ ազգայինս, որպէսզի ո՞վ որ գիտէ թէ ո՞ւր կը գտնուի նա, իմաց տայ Պատրիարքարանի 'ի պատշաճ տնօրէնութիւն : Սակայն ոչ ոք տեղեկութիւն տուած էր ցայսօր յայտ մասին :

Այս անգամ կնոջը Նազըի վերստին թախանձանայ վրայ պարտաւորեցաւ Պատրիարքարանը՝ ազգա. կրօնական ժողովոյ որոշմամբ և եռամսեայ պայմանաժամաւ երկրորդ անգամ սոյն պաշտօնական յայտարարութիւնը հրատարակել յամենայն լրագիրս ազգային, որպէսզի ո՞վ ոք գիտէ՝ թէ ո՞ւր է յիշեալ Այվազեան սէիս Գաբրիէլը և թէ ինչ գործով կըբաղի, կամ թէ մեռած է արդեօք թէ կենդանի, փութով ծանուցանէ ազգային Պատրիարքարանի 'ի գիտութիւն և 'ի տնօրէնութիւն կարեւորին :

Կ. Պօլսոս, 13 Յուլիս 1877 : (Տ. Կ.)

—Աւստրոհունգարիոյ դեսպան 'ի Կ. Պօլսոս՝ վսե. Զիշի կոմսն յանցելուով շաբաթու 'ի Գուլմ—դաբու յազգային Պատրիարքարանն գնաց յայցելութիւն ամենա. Ս. Պատրիարքին մերոյ բայց նորին Սրբազնութիւնն բացակայ լինելով, իւր այցետոմսն թողով մեկնեցաւ :

Զինի երկուց աւուրց՝ Ս. Պատրիարք Հայրն փոխադարձ այցելութեան գնաց առ վսե. Զիշի կոմսն, յորմէ յարգանք ընդունուեցաւ :

ՄԱՀԱՐԱՔԱՆԻ ԵՒ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Աստիկի պապանոյն Յովնայ Յ. Միլեան, ի լոյս ընծայեալ 'ի տպարանի Արամեան, Կ. Պօլսոս, 1877

Յուրաժայ 267 երեսաց բաղկացեալ սգոյի մատեան մի է, կամ լաւ եւս է ասել տխուր յիշատակարան մի, յորում համառօտիս գծագրեալ է կենսագրութիւնն վաղամեծիկ Յակոբիկ հանճարեղ պատանայն, որդւոյ գերա. տէր Յօ. Մկրեան աւագ քահանայի, Պատրիարքական փոխանորդի Կ. Պօլսոյ :

Այս յիշատակարանին մէջ պարունակեալ են հանգուցելոյն իմաստասիրական եւ բարոյական գանազան գրութեան, բազմաթիւ նամակք եւ ջափաբերական գրութիւնք՝ յուղարկեալք 'ի մերձաւոր եւ 'ի հեռաւոր բարեկամաց 'ի մխիթարութիւն որդեկորոյս դժբաղդ Հօրն, որպէս և ազգային լրագրաց գոծատու յօդուածքն, որք 'ի ժամանակին ծանուցին գտարածամ փոխումն առ Աստուած վերոյիշեալ ուսումնական պատանայն :

Իցե՛ք եւ այս Մանարձանն, որ կանգնեալ է 'ի բա-

րեկամաց եւ 'ի վշտակիր Հօրն հանգուցելոյն, եւ որ Հայ ժողովրդեան տէր Յօ. Մկրեանի վերայ ունեցած սիրալիր համակրութեանն ապացոյց մի կհամարուի, իցե՛ք եւ, ասեմք, այս մանարձանն մեղմացուցեւ սակաւի ինչ գղաւն կսկիծ սրտի որդեկորոյս Հօրն :

ԻՕԺԻՆ ՏՐԱՐԻՐՈՒՐ

Մարիոն տը Լօրմի խոստովանաբք, կամ Պատմական տարիանք :

Ի պարոն Գրիգոր Զիշիկերեան գրադէտէն թարգմանեալ այս բարոյական գեղեցիկ վիպասանութեան երրորդ հատորն ևս՝ որ բաղկացեալ է յութածալ 212 երեսաց, 'ի լոյս ընծայեցաւ 'ի տպարանի Տէտէեան եղբայրց :

Իւրաքանչիւր հատորոյն գինն 2 Ֆրանք է, և կըվաճառուի 'ի քաղաքիս 'ի յիշեալ տպարանն :

ՁԱՆԱԶԱՆ ԽՈՒՐԵՐ

Զմիռնիս, 6 Օգոստոս :

Այս շաբաթու Այսքնէն, Մանիսայէն, Մէնի-մէնէն, Ղասապայէն և Գրքաղաճէն 5000էն աւելի մուսթաֆէդներ և կամաւոր զինուորք հասան, որոց շատը զէյպէք է : Այսօր վաղըթայի թիճարէթ տղենաւով յիշեալ զինուորացի մէկ մեծ մասն կըմեկնի 'ի Կ. Պօլսոս երթալու :

—Քաղաքիս անդորրութիւնն, և բարեկարգութիւնն կըշարունակեն խնամք մեր վսեմա. կուսակալին, որոյ խոհական և արթուն վարչութիւնն անշուշտ գովութեան արժանի է :

—Օղոյն ջերմութիւնն սակաւ ինչ չափաւորեցաւ և թեթեւ անձրեւներ եկան : Ռէտմուրի ջերմաչափը 24—25 աստիճան կընշանակէ :

—Երեքշաբթի օրն օսմանեան շոգենաւով մի իբր 1800 թաթար գաղթականք եկան 'ի Կ. Պօլսոյ : Ասոնք 'ի մի քանի ամաց հետէ 'ի Տոպուռնա կըբնակին, և ըստ մեծի մասին ծեր, տղայք և կանայք են, ու ամենախեղճ փիճակի մէջ կըգտնուին : Մեր վսե. վարիին մարդասիրական խնամքն՝ կարելի եղածին չափ օգնութիւն եղև այս գաղթող գերդաստանաց, որք պատաւարեցան 'ի ֆուրանթիւնան քաղաքիս, և հասարակաց շէնքերու և խանութի մէջ :

—Կըլեմէթ թէ Պուռնովայի Հայոց մատրան մէջ գողեր մտնելով, 100 լիւայից արծողութիւն արծաթեղէն և ուրիշ բաներ վերցուցեր են :

—Յանցելուով շաբաթու Նիփի ժող. Էքմէքճի պաշը Մէհմէտ Էփենտի անուն հարուստ անձ մի՝ դժբաղդաբար աւաղակայ ձեռքն լինալով լեռը տարուեցաւ : Այս եղեւնագործքն՝ ըսածնուս նայելով, 3000 օսմանեան լիւս փրկանք կըպահանջեն, որպէսզի թող տան զինքը :

—Քաղաքիս ոստիկանութեան տեսուչն՝ ըստ հրամանի վսե. Սապրի փաշային, փութացաւ բաւական զօրք Նիփի կողմերն երթալ. և թէպէտ տակաւին լուր մի չկայ, սակայն կըյուսուցուի թէ վերջապէս պիտի յաջողի ձեռք ձգելու զյիշեալ յանդուգն աւաղակներն :

—Ի Կ. Պօլսոյ Օղոստոս 4—16 ամաթութեով առ վսե. կուսակալն մեր հասեալ հեռագիր մը զյետագայ յաջող լուրերն կուտայ :

Թշնամին Գառաքիլիսէի մօտ կայսերական զօրաց վերայ յարձակելով, հալածեցաւ մինչև 'ի Բիշովա :

Սիւլէյման փաշան Խոյլին—Պողազ կոչեցեալ կիրճն անցանելով դէպ 'ի Շիփքա կըքայէ :

Բուշճուքի և Բազըրասի մէջ մօտաւոր մեծ պատերազմ մի կըսպասուի : Ռուսաց զօրաբանին պարպեց զֆոսթանցա : Ասիոյ մէջ փոքրիկ պատերազմներն կըշարունակեն :

—Լոնտոնէն միւնիչն ամաթութեով հասեալ հեռագիր մի կըծանուցանէ, թէ ըստ ԹԱՅՄՁ օրագրոյն, օսմանեան նոր փոխառութիւն մի կնքուեր է :

—Կայսերական հրովարտակաւ հետեւեալ պաշտօնաբաշխութիւնքն և փոփոխութիւնքն տեղի ունեցան .

Գայսէրի Աճմէտ փաշան՝ որ Դանուբի գաւառին կուսակալ է, միանգամայն հրամանատար կարգեցաւ 'ի նոյն մեծ գետն գտնուող օսմանեան նաւատորմին :

Շերակուտի նախագահութիւնն՝ արտաքին գործոց նախորդ պաշտօնեայ Արիֆի փաշային յանձնեցաւ :

Թնդանթաճիգ զօրաց գնդապետ Սիմօն—Պէյին Լիվայութեան աստիճան շնորհեցաւ :

—Կըհաւաստեն՝ թէ Մագսուտեան վսե. Սիմօն—Պէյն որոշեր է ամսէ ամիս 3000 զուրուշ նուիրել 'ի նպաստ զինուորական ծախուց մինչև յվերջն պատերազմին :

—Նմանապէս Նորատունկեան վսե. Յակոբ է. ֆէնտին՝ որ զինուորական նպաստից մասնաժողովոյն անդամ է, խոստացեր է ամիսն հազար զուրուշ տալ նոյն մասնաժողովոյն անտուկին :

—Կ. Պօլսոյ Լիվ.Ընթ.—ՀիւրէլՏ անդղիւրէն օրագիրն, որ անորոշ պայմանաժամաւ գաղաթեալ էր գրեթէ 'ի վեց շաբաթուց հետէ, սկսաւ վերստին հրատարակուիլ Բարձրագոյն Դրան ներողամիտ թողտուութեամբ :

—ՄԱՍԻՍ լրագրոյն Յուլիի 10 թուոյն մէջ գհետեւեալն ընթեռնուեց :

«Ս. Պատրիարք Հայրը շաբաթ օրը՝ յատուկ հրաւիրմամբ Մեծ—Եպարգոսին երթալով, Նիւրին Բարձրութիւնն յանուն վեհա. Սուլթանին գոհութիւն յայտներ է՝ Հայոց ազգին մատուցած ծառայութիւններէն և առաջարկեր է որ Հայոց ազգէն կամաւոր զինուորութիւն մի կազմուի մայրաքաղաքիս պահպանութեան և վեհա. Սուլթանին անձնապահութեան գործաժուկեալ :

«Այս առաջարկութիւնն՝ ինչպէս կըտեսնուի, վեհա. Սուլթանին Հայոց ազգին վրայ ունեցած համարման և բարձր վստահութեան ակներկ ապացոյց մ'է. որուն՝ կըյուսանք թէ ազգն ալ ըստ արժանւոյն պիտի պատասխանէ» :

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Բամպակէն 250 հակ վաճառեցաւ այս շաբաթու. յորոց 230ը մեքենայով մարտում 'ի գին 350—355 զուրուշից, և 20 հակը Աստան, 315ով առ կենդինարն :

Ափիսին Եէրլի կոչեցեալ առաջին տեսակի գինը՝ 130—127 զուրուշ է առ չէքին. երկրորդ տեսակինը՝ 126—125 և ստորին տեսակինը՝ 123 122 1/2 զուրուշ, ի նոր հնձոյն մինչև ցայսօր հասին 2500 կողովք, յորոց գրեթէ 1200 կողովքն վաճառեցան :

Փալամուտէն 400 կենդինար Անգղիոյ տեսակ վաճառեցաւ. 142ի առ կենդինարն :

Ոչխարի բուրդն կուգուի. այս շաբաթու 200 կենդինար անլուայ բուրդ ծախուեցաւ 335 կենդինարն :

Ճէհրիին այսօրուան արժէքն 5—8 զուրուշ է օխան՝ ըստ տեսակին :

Գէօքպոյայէն 100 բուրձի չափ Պալաքի և Տէմիքիլի ապրանք վաճառեցաւ 70 զուրուշով առ կենդինարն :

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Այս լրագիրը երկու շաբաթը անգամ մը՝ շաբաթ օրը կըհրատարակուի : Տարեկան գինը 120 զուրուշ է օրը գրամով, կրնիսիկ վճարել : Դուրս երթալու լրագրաց ճանապարհի ծախքը՝ առնօղին վերայ է : Ո՞վ որ կուգէ կրնայ բաժանորդ դրուիլ Զմիռնիս՝ Արշալոյսայ զրատունը. իսկ ուրիշ քաղաքացի համար, ահա կընշանակուի լրագրոյս մեծարդոյ գործակալաց անուանքը, որք են :

Կաստանդնուպոլիս՝ Հ. Ս. Աւաճաճեան էփենտի Տնօրէն և Տէր Փոռնը լրագրոյն :

Աղբաւանդլիա՝ ազա Մկրտիչ Հալպիւսեան : Գազիլէ՝ Իսկէնտէր առա Մեղիքեան :

Յոպպէ՝ ազա Սիմօն Ս. Մուրատեան, փոխ—վսե. պատոս Գերմանիոյ :

Բէշէրսպուրէ՝ Խաչատուր սարկաւազ Խանթաթեան : Մոսկուա՝ պարոն Զարմայր Մսերեան :

Հալպի՝ Տ. Խաչակ քահանայ Դահլիքիլեան : Պաղատա՝ Անգղիոյ հիւսկոտտի փոխանորդ, ազա Միքայիլ մաճոսի Միմասեան :

Կալիփթա՝ պարոն Մ. Խ. Յովակիմեան : Մատրա՝ պարոն Անդրէաս Սամ :

Պաղալիա՝ պարոն Մանուկ Որդանանեան :

Խմբագիր—տէր լրագրոյս, Գ. Մ. Գ. Պալատեան :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱՆՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ